

13164



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Արամ Մեյմարյան



*[Handwritten signature]*

«04» 12 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 255 - 24

Նախաձեռնող՝

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Նորայրուս հ. Նորայրուս բն. Սարայանջ փ. նրբ. 1 փ.1

Գործունեությունը՝

Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրի  
կրթահամալիրի կառուցում

Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 255 - 24

«04» դեկտեմբեր 2024թ.

**Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, Փոքր Մասրիկ բնակավայր

**Ներածական մաս.** «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ն նախատեսում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրում, մասնակի կառուցապատված դպրոցի հարակից տարածքում՝ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում կառուցել ժամանակակից պահանջներով և ստանդարտներով դպրոցի նոր շենք: Ծրագրի իրականացնողն է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (<ՏՀՀ>) ՀՀ կառավարության պետական բյուջեի միջոցներով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 19092024-05-0038, ծածկագիրը՝ 05-092-0013-0018 և Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված նախագծման N75 թույլտվությունը, տրված՝ 2024 թվականի սեպտեմբերի 23-ին:

Հողմասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:



Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են տարատեսակ հրաբխանստվածքային, հրաբխային և նստվածքային ապարներ, որոնք հաճախ ծածկվում են ծածկոցի տեսքով՝ չորրորդականի ջրաբերներով և փխրունաբեկորային առաջացումներով:

Տարածքի երկրաբանական կտրվածքն ուսումնասիրվել է հորատման եղանակով՝ ֆոնդային նյութերի համադրմամբ: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար՝ համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրության արդյունքների:

**Նկարագրական մաս.** Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ նախագծվող դպրոցը կառուցվելու է ներկայիս դպրոցից մոտավորապես 100 մ հեռավորության վրա: Կրթահամալիրը նախատեսված է 144 աշակերտի համար իսկ մանկապարտեզը 80 երեխաների համար: Համաձայն նախագծի՝ դպրոցը երկհարկանի է: Կրթահամալիրն իրենից ներկայացնում է՝ երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենք, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ և երկհարկանի մանկապարտեզ: Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ, հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, վարիչի և բժշկի սենյակ: Երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հոգու համար: Մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա: Մանկապարտեզը նախագծված է 2 հարկից՝ 4 խմբի համար:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե երեսապատման սալիկներով և տրավերտինով: Պատուհանները լինելու են ալյումինե, ջերմային կամրջակով, երկշերտ ապակեփաթեթով: Աստիճանները երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը՝ մետախային խեցեսալիկներով և վինիլներով:

Նախագծով նախատեսված էլեկտրամատակարարման, ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցերի, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները նախատեսված են համաձայն տրամադրված տեխնիկական պայմանների իսկ հրդեհային ազդարարման և տեսահսկման մասերը ըստ ՀՀ շինարարական նորմերի: Նախագծով նախատեսվում է մինչև 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում Փոքր Մասրիկ կրթահամալիրի տարածքում:

Բնակելի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 1.2 հա,
- ընդհանուր կառուցապատման մակերես՝ 1999,1 մ<sup>2</sup>,



➤ կանաչապատման մակերես՝ 5420 մ<sup>2</sup>:

Շինարարությունն իրականացվելու է երկու փուլով, առաջին փուլի ընթացքում իրականացվելու են հողային աշխատանքներ, այնուհետև կառուցապատման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ քանդման աշխատանքները ներառելու են միայն հողային աշխատանքներ, տարածքում առկա են բետոնե շինվածքների մնացորդներ շուրջ 60 խմ:

Քանդման ընթացքում առաջացած ավելորդ գրունտը տեղափոխվելու է Փոքր Մասրիկ բնակավայրից 2.5-3 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ ըստ Վարդենիսի համայնքապետարանից տրված տեղեկանքի:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 670 օր: Շինաշխատանքների իրականացման ժամանակ սահմանազատվելու է շինհրապարակը, կատարվելու են կրթահամալիրի կառուցման աշխատանքները, իրականացվելու է բարեկարգման աշխատանքները:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ արտադրական ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում: Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ընդհանուր հողային աշխատանքների ծավալը 2570 մ<sup>3</sup> է, հետլիցքը՝ 280 մ<sup>3</sup>, բուսաշերտը՝ 570 մ<sup>3</sup>, իսկ ավելացված հողային հանույթը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Հողային աշխատանքների հանույթի ժամանակ առաջացած շուրջ 570 մ<sup>3</sup> քանակությամբ պահպանությունը իրականացվելու է 1404Ն որոշման համաձայն և օգտագործվելու է հետլիցքի նպատակով:



Հիմնական թափոնատեսակները, որոնք կառաջանան շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է՝ 10800 կգ/տարի, և շինարարական աղբը՝ 200 մ<sup>3</sup>: Շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են կապալառուի կողմից համապատասխան վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Կանաչապատման համար մասնավորապես կօգտագործվի՝

- կովկասյան եղևնի - 34 հատ,
- տուա, սամշիտ, բարբարիս - 34 հատ

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքում գոյություն ունեցող ոռոգման համակարգից:

Հաշվետվությունում ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման գործողություններ՝ ստուգելու շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվող մեղմացնող միջոցառումների համապատասխանությունը:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինհրապարակում փոշեգոյացնող աշխատանքների ժամանակ իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքապետարանի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Դպրոցի կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինարարական հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO<sub>x</sub>) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև



նորատունկ կանաչ գոտում վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

**Պարճառարանական մաս.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային լուծումներն իրականացվել են Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրում: Հանրային լուծումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Վարդենիսի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվությունը լրամշակելիս:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ նախատեսված են բավարար բնապահպանական միջոցառումներ:

### Փորձաքննական պահանջներ

1. Կրթահամալիրի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
2. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել համաձայն հաշվետվությամբ ներկայացված լուծումների, առաջնորդվելով՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներով:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վարդենիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի հուշարձանների»



հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման 43-րդ կետի՝ որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Էլեն Մկրտչյան